

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻՆ ԵՎ ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ս. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Գրիգոր Տաթևացու լեզվագիտական հայացքներն ուսումնասիրվել են մի շարք բանասերների կողմից: Տաթևացու կատարած ստուգաբանություններին անդրադարձել է Հր. Աճառյանը՝ «Հայերեն արմատական բառարանում» արմատների ստուգաբանության պատմության մեջ շարադրելով նաև Տաթևացու բացատրությունը այս կամ այն բառի վերաբերյալ: Գ. Զահուկյանն իր «Քերականական և ուղղագրական աշխատությունները» հին և միջնադարյան Հայաստանում՝ աշխատության մեջ ի թիվս մյուս քերականների վերլուծելով նաև Տաթևացու հայացքները, ներկայացնում է դրանք հիմնական գծերով՝ ցույց տալով նախորդ քերականների հայացքների հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները: Տաթևացուն իբրև «գրչության արվեստի» տեսարան է ներկայացնում նաև Լ. Խաչերանը:

Սակայն, այնուամենայնիվ, Տաթևացու թե՛ լեզվագիտական հայացքները և թե՛ բաների ստուգաբանություններն ու բառամեկնությունները ամբողջությամբ չեն ներկայացվել: Լեզվագիտական հայացքների մասին մինչև այժմ խոսք է ասվել միայն Արիստակեսի և Գևորգ Սկևռացու երկերի մեկնությունների ընձեռած նյութի հիման վրա: Մինչդեռ Տաթևացին այդ մեկնությունները գրել է կյանքի վերջին տարիներին (1408 թ. Մեծոփավանքում), իսկ մինչ այդ իր գրեթե բոլոր աշխատություններում բազմիցս անդրադարձել է լեզվի խնդիրներին. ալո մեկնություններով ամբողջացել են նրա հայացքները լեզվի վերաբերյալ: Կատարած ստուգաբանությունները և բառամեկնությունները Հր. Աճառյանի կողմից վկայակոչված են մասամբ միայն (սնոր բառգիրք Հայկազնան լեզուի մեջ ընդգրկված չեն ընդհանրապես):

Քաջածանոթ լինելով գիտական մտքի նախորդ նվաճումներին, Տաթևացին կարողացել է ընդհանրացումներ կատարել: Այս առումով բացառություն չեն կազմել նաև նրա լեզվագիտական հարցադրումները: Ընդ որում, եթե մինչ այժմ իրեն նախորդ քերականական միտքը համակարգող հեղինակներ նշվել են Գրիգոր Մագիստրոսը և Հովհաննես Երզնկացին, ապա նոր փաստերը թույլ են տալիս անհշարժորեն նշանց շարքը դասել նաև Տաթևացուն, որովհետև, ինչպես կտեսնենք, նա համադրել է տեսակետներ՝ սկսած Դավթիս մինչև Հովհաննես Երզնկացի, ընդ որում համադրել է ոչ թե պատահական թաղումներ անելով, այլ որոշակի սկզբունքով դիմել է այն հեղինակներին, որոնց տեսակետները ընդունելի է համարել և դրանցով ամբողջացրել է իր հայացքները:

Սակայն մինչ դրանց անցնելը մի քանի խոսք Արիստակեսի և Գևորգ Սկևռացու երկերի մեկնությունների մասին:

Տաթևացին գրել է բազմաթիվ երկերի մեկնություններ, որոնց համեմատությունները աղբյուրների հետ ցույց են տալիս, որ նա հիմնականում նպատակ է հետադիմել դրանք դարձնել ավելի մատչելի. իր ժամանակակիցներին հասկանալի՝ դրանով միաժամանակ նոր կյանք տալով գործածությունից դուրս էկոլ երկերին: Հիմնականում պահպանելով աղբյուրների կառուցվածքային ամբողջությունը, Տաթևացին որոշ հատվածներ համառոտել է կամ՝ ընդհակառակը՝ ընդարձակել, երբեմն էլ դուրս ենտել, եթե ավելորդ է համարել: Ի նկատի առնենք, որ խոսքը մեկնողական դրականության մասին է, որը գործածությունից դուրս էր զայրս ժամանակի լեզվամտածողությանը չհամապատասխանելու պատճառով. սակայն այստեղ ավանդականն ու ազգային էր, ուստի մեծ է Տաթևացու ծառայությունը նաև այս բնագավառում, որովհետև ավանդական մեկնողական գրականության մեջ ընդունված աստվածաշնչյան թեմաների սեփա-

1 Գ. Զահուկյան. Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, 1954:

2 Լ. Խաչերան. «Գրչության արվեստի» լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում. Երևան, 1962:

կան մեկնությունը տալու փոխարեն գրում է Վարդան Արեւելցու «Մեկնութիւն Երզոյն» ներսեւ լամբրոնացու «Մեկնութիւն առական», Հովհան Ոսկերերանի, Ներսեւ Շնորհաւու, Հովհաննէս Մործորեցու և այլոց մեկնությունների մեկնությունը. «գրչության արվեստին» իր տեսությունը ստեղծելու փոխարեն գրում է Արիստակեսի և Գեորգ Սկեռացու երկերի մեկնությունները:

Ինքնատիպ հավելումները, վերլուծությունները, խնդրին նորոժի մոտենալու սկզբունքը թույլ են տալիս ասելու, որ մեկնության մեկնություն գրելը Տաթևացու կողմից ինքնապատակ է հեշտ ուղի փնտրելու միտք չի եղել: Ավելին, նոր կյանք տալով վերոհիշյալ հեղինակների այդ երկերին, Տաթևացու մեկնությունները միաժամանակ այնքան յուրօրինակ են, որ վրստահորեն կարելի է ասել, որ դրանք ինքնուրույն երկեր են՝ հեղինակին հատուկ լեզվաոճական առանձնահատկություններով:

Արիստակեսի և Սկեռացու երկերը, որ երկար ժամանակ գործնական ուղեցույց էին եղել գրչների համար, Տաթևացու օրերում արդեն զժվարմատելի էին հատկապես լեզվի խրթինության պատճառով: Դա ակնհայտ է նաև Արիստակեսի երկի մեկնության վերնագրից. «Լուծումն համառատ ղժուաբմիսց րանի ի գիրն գրչութեան Արիստակեսէ հոնորէա: Այսպիսով, Տաթևացին մեկնություն է գրել, որը կօգնեք գրչներին հասկանալու վերահիշյալ երկերը: Սա էլ թելադրում է նրա մեկնության ընդլայնումը. հարցադրումների մանրատում, թվարկումներ, բնագրի առանձին բառերի և բուռնապակցությունների բացատրություններ: Ըստ Լ. Խաչերյանի, «եթե Արիստակես ու Սկեռացին իրենց երկերում գերազանցապես քերականներ էին, քերականական լուծում էին տալիս յուրաքանչյուր հարցին, ապա Տաթևացին «գրչության արվեստին» վերաբերող իր մեկնություններում գերազանցապես տրամաբան-իմաստասեր է, այդ պատճառով էլ եթե մի կողմ թողնենք Արիստակեսի և Սկեռացու քերականական դրույթների կրկնությունը նրա հիշյալ աշխատությունները՝ Սա նշանակում է, որ ճիշտ չի ընկալվել Տաթևացու նպատակը: Բացի այդ, բնական համեմատությունը ցույց է տալիս, որ Տաթևացին, այդ երկերը մատչելի դարձնելու հիմնական նպատակ ունենալով հանդերձ, տեսական հարցադրումներ աղբյուրների համեմատությամբ ավելի շատ է անում՝ ընդգրկելով նաև բազմաթիվ հարակից հարցեր: Ինչ վերաբերում է ալլաբանական բացատրություններին, թվերի միատիֆիկացիային, ուսպ անդրադառնալով դրանց Տաթևացու «Քարոզգրքին» մասին խոսելիս: Մանուկ Արեղյանը գրել է, որ այն «աղաւա չէ սքոլաստիկ ձևերից, թվարկություններից և մեկնություններից, որոնք իր ժամանակի մարդկանց համար անհրաժեշտ ու հաճելի են եղել»³: Այսինքն դա ժամանակի մտածողությամբ է պայմանավորված եղել, թեև Տաթևացու մոտ այն վերաիմաստավորված է. յուրաքանչյուր ալլաբանական բացատրությամբ նա նպատակ է հետապնդում շրջապատող աշխարհում համաշխարհային տեսնել, շեշտել մարդու բանականության և իմաստության դերը, ներքին կապ գտնել երևույթների միջև:

Տաթևացին միանգամայն իրավացիորեն «գրչության արվեստին» տեսական հիմքերը տեսնում է «քերականական արվեստին» մեջ. «գրչութեան արուեստս նախ ի քերականէն ուսանիմք»⁴: Գործնական նպատակներ հետապնդելով հանդերձ, «գրչության արվեստին» իր տեսությունը կառուցում է քերականների սահմանած կանոնների, օրենքների իմաստ վրա: Ուստի համադրելով Արիստակեսի և Սկեռացու երկերի մեկնություններում ու մյուս աշխատություններում տեղ գտած քերականական հարցադրումները, կարելի է խոսել Տաթևացու որոշակիորեն համալարգված լեզվագիտական հայացքների մասին:

Այս մեկնություններից բացի լեզվի խնդիրներին վերաբերող առանձին աշխատություններ Տաթևացին չունի, սակայն լեզվի վերաբերյալ առանձին հատվածներ ունի «Գիրք հարցմանց» («Վասն լեզուաց»), «Մեկնութիւն սաղմոսաց» («Վասն լեզուի և գրչի»), «Գիրք քարոզութեան» («Նորին քարոզ վասն լեզուի») աշխատություններում:

Նրա ինչպե՞ս փիլիսոփայական, սոցիալ-տնտեսագիտական, բնագիտական, մանկավարժական, գեղագիտական, այնպես էլ լեզվագիտական հայացքներն աչքի են ընկնում հարցերի ընդգրկման բազմազանությամբ. նա հարցադրումներ է անում սկսած արտասանական օրգան-

³ Նույն տեղում, էջ 192—193:

⁴ Մ. Արեւելյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1970, էջ 416:

⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 1115, էջ 211բ:

ներից, ընդգրկում գրանշաններին, շարժանշաններին, ձևաբանությանը, շարանյուսությանը վերաբերող բազմաթիվ հարցեր:

Հետաքրքիր են Տաթևացու ընդհանուր հարցադրումները, որոնք վերաբերում են ոչ միայն հայերենի իրողություններին, այլև փորձում են բացատրել, թե ինչ է լեզուն, ինչ դեր ունի այն, ինչ կապ կա լեզվի և մտածողության միջև: Հատկապես այս ընդհանուր տեսական հարցադրումները աղերսվում են նրա փիլիսոփայական հայացքներին: Մարդուն դիտելով իրեն աշխարհի տեր ու տնօրեն, նա համախ է մարդկային ձեռքը և լեզուն միասին օրինակ բերում՝ առաջինը դիտելով իրեն աշխարհարարման գործիք, երկրորդը՝ մտքի: Լեզուն մեզանում իր այդ գործառույթյան համար, այսինքն իրեն գործիք իմացմանը սպասավորելու, ըստ նրա, կոչվում է Երանա: «Լեզու զբան կոչի ի մեզ, դի գործի է բանին»⁶: Նա նկատում է, որ լեզու անվանմամբ նշանակվում են մի քանի հասկացություններ. լեզու է կոչվում թե՛ խոսքը (գրավոր և բանավոր), թե՛ միտքը, թե՛ լեզու անդամը և երբեմն էլ՝ քարոզողը: «Լեզուն է գործի և գրի իմաստութեան», «Լեզուն փոքր ինչ անդամ է և մեծամեծ բարբառի»⁷, «Թարգման սրտին լեզուն է»⁸, «Եվ գիտելի է, զի երբեմն լեզու կոչ է զքարոզողս»⁹:

Տաթևացին նշել է նաև այն մեծ դերը, որ լեզուն ունի հասարակության համար. «Բանիք խօսիք ընդ միմեանս և զծածուկ գիտութիւն սրտիս» լեզուան յայտնեմք. զկարիսն ցուցանեմք. զպէտսն խնդրեմք. շինութիւն և աւեր, առ և տուր և այն ամենայն բանիք կատարին. ... բանիք և իմաստութեամբ որոշիմք յանբանից. տիրեմք. իշխեմք և թագաւորեմք. յերկրէ յերկիր ընթանամք. ի ծով անցանեմք. ի ձանապարհ զնամք և բանիք զպիտոյս հայթայթեմք»¹⁰:

Տաթևացին լեզուն սահմանում է իրեն ժողովուրդներին միմյանցից բաժանող էական հատկանիշ. «Եվ սահման կոչ է զլեզուս, որ բաժանէ ի միմեանց զազս և զազիս, որպէս պարբայով և նշանի սահման դնեն: ... Եվ դարձեալ որպէս սահման զտեսակս ազգացն նշանակէ, նոյնպէս և լեզուն գիւրաբանիւր ազգս ցուցանէ»¹¹:

Խոսելով աշխարհի ժողովուրդների լեզուների մասին, նա լեզուների առաջացման հարցին պատասխանում է՝ հետևելով Վարդան Արևելցուն և Հովհաննես Երզնկացուն: Թվարկում է Արևելցուն նշած 72 լեզուները, առանձին թվարկում գիր ունեցող ժողովուրդներին. «Իսկ որ դպրութիւն գիտէ և գրով վարի՝ բաժան ազգ է, այսինքն երբայեցիք, քաղղէցիք, ասորիք, պարսիկք, մաղք, հնդիկք, փինիկեցիք, հոմայեցիք որ են սպանացիք: Իսկ ոմանք զարարացիս և զմակեդոնացիս՝ յերբայեցիս համարին և կէսք՝ ոչ: Իսկ վիրք և աշուանք ոչ կատարեալ գրով, այլ առեալ ի հայոց, որպէս ասորին և իսմայելացին յերբայեցուցն»¹²:

Ինչպես և Արևելցին, Տաթևացին նույնպես Աստվածաշնչի օգտարարականության պատմահարցը դիտարկում է իր օգտակար կողմով. նա համադրում է նաև Երզնկացու կարծիքը այս հարցում. «Ի միոյ խոշոր լեզուէ քաղղէացոցն խառնակեցան և եղև զանաղանք... զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս երևի, այլ պիտանի է. նախ՝ ի գեղեցկութիւն լեզուի, զի որպէս գոյն առ գունով պայծառանայ և արուեստ առ արուեստ. նոյնպէս լեզու առ լեզու գեղեցկանայ ի խօսքն: Դարձեալ՝ պիտանի է ի ստուգաբանութիւնս բանի»¹³:

Ըստ Տաթևացու, որպեսզի խառնաշփոթություն չառաջանա, մարդը անուններ է դնում բոլոր առարկաներին և երևույթներին: Այստեղ նա դիմում է Դավթին, որն ընդունում է ստուգաբանության երեք տեսակ. ըստ իրի, արվեստի և ձայնի¹⁴: Այս բաժանումը Տաթևացին որոշ փոփոխությունների է ենթարկում և օգտագործում ոչ թե ստուգաբանության եղանակները, այլ մարդու կողմից անուններ դնելու սկզբունքները բնորոշելու համար. Դավթի համամասնությամբ նա զգալիորեն ընդարձակում է նաև օրինակների ցանկը: Մարդը անուններ է տալիս ժյիրէն և ի գործոյն և ի ձայնէն: Յիրէն որպէս սպիտոր, երկին, երկիր, գաղան, անասուն: Ի գործոյն որպէս սողուն ի սողալոյն, ի շողորթթելոյն շունն, ի հեզոյն՝ եղն, յառնելոյն՝ առիւծ: Եւ կայ

6 Գրիգոր Տաթևացի. Գիրք քարոզութեան, Ամարան. Կ. Պոլիս, 1741, էջ 218:

7 Նույն տեղում, էջ 235—226:

8 Գրիգոր Տաթևացի. Մեկնութիւն Մատթէի. տե՛ս ՄՄ, ձեռ. № 1264, էջ 160ր:

9 Գրիգոր Տաթևացի. Մեկնութիւն սաղմոսաց. տե՛ս ՄՄ, ձեռ. № 5869, էջ 71ր:

10 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 221:

11 Գրիգոր Տաթևացի. Գիրք հարցմանց. Կ. Պոլիս, 1729, էջ 293:

12 Նույն տեղում, էջ 299:

13 Նույն տեղում, էջ 297:

14 Տե՛ս Գ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 133:

ի տուն՝ կատուն և խուզողն՝ խոզը Եւ ի ձայնէն՝ որպէս ճնշողով, ծիծառն, խօսող, ագռաւ և ալլեն¹⁵։ Բացատրությունը ամբողջական դարձնելու համար նա նաև ստուգարանում է այդ բառերը, Խակ ընդհանրապես անուններ տալու անհրաժեշտությունը նա հետևալ կերպ է պատճառաբանում. նախ՝ անունը միայն բավական է, որ մարդը բոլոր առարկաներից տարբերի խոսքի առարկան. «Հարկաւոր է անուն ամենայն իրի. նախ դի անուամբն գոյանալ իրն ի միտս մերս»¹⁶, ապա անունը, ի տարբերություն սահմանման, կարճառոտ տեղեկություն է տալիս խոսքի առարկայի վերաբերյալ. «Անունն սահման է կարճառոտ՝ յայտնիչ բնութեան ենթակալ իրին»¹⁷, մինչդեռ սահմանումը տալիս է նաև խոսքի առարկայի էական հատկանիշների բնութագիրը. «Ամենայն ինչ անուամբ կամ սահմանաւ ճանաչի, այլ սահմանաւ առաւել քան անուամբ. Որպէս լորժամ ասեմք. գի՞նչ է մարդ. յորժամ զանունն պատասխանեմք, ոչ գիտեմք թէ որ մարդ է. կենդանի է թէ գրեալն. Եւ յորժամ զսահմանն ասեմք՝ կենդանի, բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ, ա՞նա առաւել յատկացաւ սարդն»¹⁸։

Տաթևացիները որոշակիորեն առանձնացնում է մի շարք երևույթներ, որոնք մարդու կյանքում առանձնահատուկ նշանակություն ունեն. դրանք մասին նա համեմատաբար ընդարձակ է խոսում և հաճախ է շեշտում դրանց դերը. Այդպիսի երևույթներից է գիր ունենալը. նա բազմիցս անդրադառնում է մարդու գիր ունենալու մենաշնորհին. «Վասն է՞ր մարդս կարօտացաւ դրոյս հարցին պատասխանում է, որ գիրը առաջին հերթին իմացություն ձեռք բերելու միջոց է. «Իրով և բանիւ այսինքն ընթերցմամբ և լսելով ժողովեմք զգիտութիւնս ... Ապա հայտ է, դի դիրն ներգործական է իմացութեանց»¹⁹. Ոչ միայն նշում է գրի հղտակարությունը՝ «ի գրոյն լառաջ դալ բան և խօսք ի յօգուտ մարդկանս»²⁰, այլև ընդգծում նրա հաղորդակցման և պայքարի միջոց լինելը. «Ի դատ, ի հեռիքն և ի յատելիքն գրով խօսիմք»²¹։

Գրի ամենամեծ դերը պատմության հաստատումն է. Բանավոր խոսքը անցողական է՝ «բանն անցանի և գիրն մնայալ»։ Նյութական հետքեր չի թողնում նաև ժամանակը. «Անցեալ ժամանակն կորեաւ և հանդերձեալն չէ ի միշի և ներկայն փութով անցանի»։ Այս դեպքում գրավոր հուշարձանները դառնում են մարդկության հիշողության փրկության միջոց՝ «Վասն մոռացման գրեմք»²²։

Տաթևացիներն բավական մանրամասն է վերլուծել նաև մտածողության և լեզվի միջև եղած կոպուր. Խոսելով մտածողության բնախոսական կողմի մասին, նա ասել կարծիքն է հայտնում, որ մտածողությունը իրականանում է դիտողների երեք հատվածներով. զգայականը՝ ճակատի առաջին փորվածքով, իմացականը՝ միջին, հիշողականը՝ վերջին. «Առաւել մասն զլիսոյն է տեղիք և գործիք մտացն, որ բաժանի նախ յերեքին մասուսն. ի հասարակ զգայութիւնս յիմացականն և ի յիշողականն. Եւ ի հասարակ զգայութիւնս լառաջին փորուածս ճակատին և իմացականն ի միջին փորուածն և յիշողականն ի վերջին»²³։ Մի կողմ թողնելով այն, թե այս տեսակետի մանրամասները որքանով են գիտական, պետք է նշել, իհարկե, որ նման հարցադրումն արդեն իսկ ուշագրավ է։

Տարբերելով մտածողության այս երեք աստիճանները, Տաթևացիները անվանում է «գորութիւնք մտացն»։ Սրանք միմյանց հարաբերվում են աստիճանական բարդացմամբ. առաջինը՝ «որպէս յարտաքին դիւանս թագաւորաց դիւանադպիրք մի քան մի առաւել հարցանեն և գրեն ի թղթիս, երկրորդը՝ «է առաւել խորհրդական որպէս վեզիր թագաւորին և բանական լուսով տեսանէ զամենայն ուղղապէս և իմանալ և խորհի և ընտրէ և այս է մեծագոյն ճանաչումն, քան զամենայն որ ասացաւ յառաջագոյն, գի սովաւ ոչ միայն գիտէ զներկայն, այլև զհանդերձեալն»²⁴. Երրորդը մաքի և հիշողության պահեստն է՝ «դի ի նա մտանէ ամենայն իրաց գիտութիւն և ժողովի և այսպէս վերջին փորուածն կոչի միտք և յիշողութիւն»։ Զի ըստ

15 Գիրք հարցմանց, էջ 220։

16 Նույն տեղում, էջ 219։

17 Նույն տեղում։

18 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 165։

19 Գիրք հարցմանց, էջ 143։

20 Մեկնութիւն Մաաթէի, էջ 24բ։

21 Մեկնութիւն սաղմոսաց, էջ 80ա։

22 Նույն տեղում, էջ 67բ, 80ա։

23 Գիրք քարոզութեան, Զմերան, էջ 138։

24 Նույն տեղում, էջ 138։

որում զամենայն ինչ մուծանէ և հաւաքէ՝ միտք կոչի և ըստ որում վերստին յիշէ և յարտաօս բերէ՝ յիշողութիւն անուանիւ²⁵։ Իսկ թե ինչպէս է ճակատի երրորդ փորձութեամբ ամբարում միտքը և հիշողութիւնը, բացատրում է հետեյալ կերպ. նա տարբերում է երկու ականջ՝ արտաքին և ներքին։ Առաջինը ականջ օրգանն է, որն ունի երկու դուռ՝ ըստ մինն մտանէ և ընդ միւսն ելանէ բանն և ոչ պահէ²⁶։ Ներքին ականջը ունի մեկ դուռ՝ զլսողութիւն և յորժամ լսէ, տանի ի միտսն և ամբարէ, զոր յիշողութիւն կոչեմք և միտք²⁷։

Տաթևացի ընդհանրապէս մտածողութիւն և լեզու հարաբերության մեջ առաջնութիւնը տալիս է մտածողությանը. «Միտքն է աղբիւր լեզուին»²⁸։ Բայց (նախադասութիւն, զատողութիւն) նախ ծնվում է մտքում, ապա՝ արտաբերվում լեզվով. «Բանն ի մտացն ծնանի և զայ ի սրտոն և ապա ի լեզուն»²⁹։ Նա մի կողմից նախադասության և զատողության իմաստները տալիս է միևնույն բանն՝ տեղի ունի, հստակորեն չի տարբերակում նաև լեզուն և խոսքը, ուստի երբեմն էլ այդ հասկացություններն օգտագործում է մեկը մյուսի փոխարեն. մի դեպքում՝ «եօսքն է թարգման մտաց և բանի (զատողութիւն—Ս. Գ.) ... խօսքն որ է արտաբերեալ բանն»³⁰, մյուս դեպքում՝ «բանն է (նախադասութիւն—Ս. Գ.) որով խօսիմք»³¹, մյուս կողմից նույնացնում է մտածողութիւնը և լեզուն։ Դրանց կապը նա այնքան միայնակաժամ է տեսնում, որ երբեմն մտածողությամբ պայմանավորված նրկութիւնները վերագրում է լեզվին։ Տարբերում է լեզվի բարի և չար ֆունկցիաներ. «Եւ լեզուն ի զանազան ազգս խօսի կամ զբարի կամ զչար»³²։ Առաջին դեպքում լեզվից առաջ են զալիս բոլոր բարութիւնները՝ հոգեւոր և մարմնավոր։ Սա, ըստ Տաթևացու, պայմանավորված է այն հանգամանքով, որ այս դեպքում միտքն է առաջնորդում լեզվին. «Եմաստութիւն է, որ նախ միտքն ընթանայ ի բանն և ապա լեզուն հետեի, որպէս նախ ճրագն ընթանայ և ապա մարդն, յայնժամ ոչ թիւրի»³³։ Երկրորդ դեպքում տեղի է ունենում հակառակը. «Թէ լեզուն յառաջ է քան զմիտսն՝ նա տգիտութեամբ սխալի և որոգայթի»։ Սրանից ծնվում են լեզվի չար ֆունկցիաները՝ սուտը, դատարկաբանութիւնը, խաբեութիւնը, բամբասանքը, հիշոցները, մատնութիւնը և այլն։ Այս ամենը նա վերագրում է նաև լեզվի դիրքին. «Լեզուն դիւրաւ սափ և սխալի... ոչ երկնչի յամբողջի ի բերանոյն միշտցի գտով»։ Ուստի նա խորհուրդ է տալիս եօրպէս արծաթ եօթն անգամ լըստակել և ապա խօսիլ։ Յայնժամ մարդիկ հաւանին ի քեղեցիկ խօսս։ Ապա թէ զայսպիսի ընտրութիւնս ոչ սատանայ, որ զինչ ի բերան զայ փութապէս խօսի, ամենայն վնաս և որոգայթ լինի»³⁴։

Այս դատողութիւններում առաջին հերթին գնահատելի է, իհարկեւ, լեզվի և մտածողության կապի ընդգծումը։ Եվ երկրորդ, նա, թեև բացասական առումով, այնուամենայնիւ նշում է նաև լեզվի ինքնուրույնութիւնը (սապա թէ լեզուն յառաջ է քան զմիտսն...)

Այսպիսով, Տաթևացի թեև հաճախ նույնացնում է մտածողութիւնը և լեզուն, և նրա հարցադրումներում երբեմն նույնանում են տրամաբանական և քերականական տերմինները³⁵, սակայն այդուհանդերձ, լեզուն նա դիտում է նախ և առաջ իբրև մտքի արտաձայնման միջոց։ Բերենք նրա լավագույն ձևակերպումներից ևս մեկը. «Արգանդ մտացն ծնանի զբանս և լեզուն կերակրէ»³⁶։

25 Նույն տեղում։

26 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 448։

27 Նույն տեղում, էջ 448։

28 Նույն տեղում, էջ 340։

29 Գիրք քարոզութեան, Ձմեռան, էջ 103։

30 Գրիգոր Տաթևացի. Գիրք որ կոչի Ոսկեփորիկ. Կ. Պոլիս, 1746, էջ 135։

31 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 432։

32 Մեկնութիւն սաղմոսաց, էջ 80ա։

33 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 406։

34 Նույն տեղում, էջ 220։

35 Այդ մասին Գ. Զահուկյանը գրում է. «Գրիգոր Տաթևացու համար քերականութիւնը և տրամաբանութիւնը սերտորեն միայնակաժամ են, քերականական հասկացութիւնները նույնանում տրամաբանականի հետ»։ Դրա պատճառն, ըստ հեղինակի, այն է, որ քերականության վերաբերյալ նրա հայացքների հիմքում ընկած են Արիստոտելի «Ստորոգութիւնը» և «Ճաղագս մեկնութեան» աշխատութիւնների այն տեղերը, որոնց տերմինները համընկնում են քերականական տերմինների հետ (նշվ. աշխ. էջ 293)։

36 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 276։

Այն երկու խոսք Տաթևացու այսպես կոչված «հայելու տեսություն» մասին, ըստ որի միտքը հիմնականում է հայելու իրականության արտացոլման առումով:

ա. ինչպես հայելին է հիշտ յույց տալիս իրականությունը, այդպես էլ միտքն է արտացոլում այն. «Որպես հայելին մաքուր տպավորել յինքն զկերպարանն իրաց զինչ և իցէ, նույնպէս և միտքն պարզ տպավորել յինքն զամենայն իմացութեան»:

բ. հայելին արտացոլում է ամեն ինչ, սակայն ոչ մի պատկեր նրա մեջ չի խառնվում. այդպես և միտքն արտացոլելով իրականությունն իր բաղձազան կողմերով, ոչինչ չի խառնում. «Որպէս հայելին կարէ ընդունիլ յինքնան զամենայն կերպարանսն յոր և զիպի և ոչ շատանայ և ոչ ի միմեանս խառնակէ, այսպէս և միտքն ընդունի զբաղձազան և ազգի ազգի գիտութիւն և զամենայնսն ամբողջարար ունակացութեանէ յինքնան, զի ոչ խառնակիւն ի միմեանս բանսն»³⁷:

Վերոհիշյալ դրույթները լեզվին աղօթում են այնքանով, որ ըստ Տաթևացու, մտքի զբառնորման միտք, ինչպես տեսանք. «անդիսանում է հենց լեզուն, հետևաբար, ինչպես միտքն է հիշտ արտացոլում իրականությունը, այդպես էլ լեզուն՝ միտքը, և ինչպես մտքի համար աղբյուր է հանդիսանում իրականությունը, այդպես էլ լեզվի համար աղբյուր է միտքը. «Աղբյուր է նույն ինքն բանական միտքն, որ միշտ և հանապազ բղխէ զրան և զիմաստութիւն»³⁸:

Այսպիսով, ինչպիսի յույց է տալիս Տաթևացու քերականական ընդհանուր տեսական հարցադրումների բնութիւնը, դրանք հանդես են գալիս սի կողմից իրեն նախորդ քերականների հույացրենքի ամփոփում, մշուս կողմից՝ ընդհանրացումների շնորհիվ հայ միջնադարյան քերականական մտքի նոր աստիճան են նշանավորում:

Հնչյունաբանության, ձևաբանության, շարահյուսության վերաբերյալ Տաթևացու հայացքները դարձյալ նույն կերպ կարելի է բնութագրել:

Գրի և տառի հարաբերությունը նա ներկայացնում է երկու կերպ. ըստ առաջինի տառը նա գիտում է որպես գրի անվանում. «Գիրն որ է գծեալ, տառն որ է կոշումն գրոյ, որպէս յասեմք՝ այրա՞ց, Երկրորդ բնութագրման մեջ նա յույց է տալիս աստիճանական անցումը ձևավորված գրից (ըստ նրա գծից) մինչև ձևավորումը (գիրը) և անվանումը (տառը). «Ոմանք ասեն զտառն որպէս հոգի և զգիրն որպէս մարմին: Այլ ես ասեմ. գիրն է՝ յորժամ ժայր գրչին գծի ի քարտէսն և զիր՝ յորժամ քերէ զմակերևոյթն և տառ՝ յորժամ բոլորգիրն ձևանայ»³⁹:

Նա համաձայնում է «Ինքնիստ Թրակացու երկի մեկնիչների այն տեսակետի հետ, ըստ որի տառը խոսքի համար նույնն է, ինչ տարբեր՝ աշխարհի. եւ տառ կոչի որպէս տարր աշխարհի, նախ զի ամենայն բան և գործ և անուն և էութիւն տարրեալ ունի: Երկրորդ, որպէս ի շրից տարբեր խառնին և կալմին մարմինը, այսպէս տառը և ձայնաւորը և անձայնը, թաւ և ասակ խառնին և կաղմին զրանս և գիտաս»⁴⁰:

Խոսքով զբամբռնողների և հնչամիջոցների մասին, նա միանգամայն հիշտ է ներկայացնում դրանց հիմնական տարբերությունները: Գրանշանների արտաքին ձևավորման մասին նշում է, որ այն կարող է լինել բաշմապիսի. «Ունի գիրն զձև երկայն և կարճ, ուղիղ և թիւր, բոլոր, եռանկիւնի, քառանկիւնի և այլն»⁴¹:

Հաշվի առնելով օգի խաղացած կարծիքը հնչյունի արտաբերման ժամանակ, Տաթևացին «ձայնական», այսինքն՝ արտասանական գործիքների շարքում նշում է նաև օդը. «Ենթեմ է ձայնական գործիք, այսինքն թոք, խոշափող, մակալեղու, բերան, լեզու, ատամունք, շրթունք և ութերորդ՝ աւղա՞ն: Նա զգուշացնում է շփոթել խոսքը և ձայնը. «Ձի բանն անմարմին՝ ծնունդ է մտաց և ձայնն շարժումն օդոյ ի ձայնական գործեաց ի յօդս բախեալ: Օդի միջոցով է, որ ձայնը հասնում է լսողական օրգաններին. «Բանն և ձայնն և լեզուաւ յօդս բախեալ

³⁷ Նույն տեղում, էջ 44: Տաթևացին այս զուգահեռները շարունակում է բաղձաթիվ կետերով, ուսկայն մնացած՝ աստվածներում խոսքը վերաբերում է աշխարհընկալման սուբյեկտիվ կողմին՝ մտավոր զարգացմանը համապատասխան. այսպիսի օրինակ՝ «որպէս հայելին ըստ իրեն լայնուն մեծ և փոքր յուցանէ զիրն, այսպէս և միտքն ըստ շափոյ իմացածոյ իրենանց առակելուն զիմանալիսն և նուաղին» (նույն տեղում):

³⁸ Գիրը քարոզութեան, 2 մերան, էջ 233:

³⁹ Գիրը հարցմանց, էջ 177:

⁴⁰ ՄՄ, ձեռ. № 1115, էջ 205բ:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում, էջ 206ա:

⁴³ Նույն տեղում, էջ 204բ:

հասանել մինչև ի լսելիս և անգ ձայնն արտաբերող մնացեալ և բանն անմարմին ի միտս լսողացն նստեալս⁴⁴։

Արիստոտելի ու Դավթի հետևողութեամբ Տաթևացիին մարդկային ձայնը հոգւովոր է համարում։ Դրա տարրորոշված լինելու պատճառը նա վերագրում է հնչյուններին, ձայնի ելնէլներին։ «Վասն է՞ր է ձայն մարդոյս յաւդաւոր։ Նախ՝ զի բան և ձայն յաւդեալ են մարդոյն։ Երկրորդ՝ զի ձայնն գրով յաւդի։ Երրորդ՝ զի սրի և բթի, զոր շունին կենդանիքս⁴⁵։ Իսկ ընդհանրապես տարբերում է ձայնի շորս տեսակ ըստ տարրորոշված և իմաստավորված լինելու։ Կանխորոշներ՝ այդ տարբերակման մեջ ճիշտ հակադրելով մարդու և կենդանու ձայնը։ «Գիտելի է, զի ձայնն ի Դ րաժանի։ մին անյօդ և աննշան որպէս անշնչից։ Երկրորդ՝ անյօդ և նշանական որպէս կենդանեաց։ Երրորդ՝ յօդեալ և աննշան, որպէս յանիւտափօս։ չորրորդ՝ յօդեալ և նշանական որպէս բանս մարդոյս⁴⁶։

Վանկի վերաբերյալ Տաթևացու դատողութիւններում ուշագրավ է հետևյալը։ Նա այն կապում է մի կողմից հնչելու, մյուս կողմից՝ շնչի հետ։ «զհեզն ականջաւք լսեմք»⁴⁷։ «ցոցանէ (հեզը—Ս. Գ.) զշունչս մեր, որ ոչ տեւէ յերկար, այլ կրկնելովս⁴⁸։ Զայնավորի և բաղաձայնի գուգորդումը վանկում բացատրում է բազմաթիվ գուգահեռներով։

Նա, ինչպես Թրակացու երկի մեկնիչները, կապ է տեսնում լեզվական միավորների միջև։ Սակայն, ինչպես հայտնի է, հիմնականում այդ կապը նշվել է միայն քանակական կողմով՝ անտեսելով իմաստայինը։ Տաթևացին որոշ ուղղում է մտնում այդ դասակարգման մեծ՝ ավելացնելով նաև դա, սակայն ոչ թե դիտելով իրրե բառին և բանին (ինչպես նշել ենք Տաթևացու մոտ սա երկիմաստ է) ներհատուկ, այլ իրրե առանձին միավոր։ Այդ աստիճանավորումը նա ներկայացնում է հետևյալ կերպ։ «Գիրն որ է գծեալ։ Երկրորդ՝ տառն որ է կոշում գրոյ, որպէս ասեմք այբ։ Երրորդ՝ հեզն ի ձայնաւորէ և ի բաղաձայնէ։ Զորրորդ՝ վանկ կամ փաղառութիւն։ Հինգերորդ՝ բանն։ Վեցերորդ՝ բանն խօսեցեալ յայտնի մեկնութեամբ։ Եօթներորդ՝ ներքին իմաստքն ամենեկին խոր և բարձրագոյն տեսութիւն, զոր ըստ ինքեան միայն իմացումն տեսանէ և ի դուրս արտաբերէ»⁴⁹։

Անդրադառնալով հնչյունափոխութեան հարցերին, Տաթևացին նշում է, որ բառերի թեք ձևերը կարող են ունենալ հնչյունների փոփոխություն, հավելում կամ պակասում։ Սխալ է համարում մի շարք հատուկ անուններում է-ի հնչյունափոխությունը։ Արիստակէս, Վրթանէս, Ներսէս, Մովսէս, որոնք սեռականում պետք է գրել ոչ թե Արիստակիսի, Վրթանիսի և այլն, այլ՝ Արիստակէսի, Վրթանէսի, Ներսէսի, Մովսէսի, քանի որ վերջին շարքը «ստորգ է և հայեցի», իսկ նախորդը՝ «աշխարհական և արցախային»⁵⁰։

Խոսելով է-ի և է-ի ուղղագրութեան մասին, Տաթևացին շփալովելու, բառի ուղղագրությունը ճշտելու համար առաջադրում է հետևյալ սկզբունքը։ ստուգում անցկացնել հոլովման եղանակով, ի նկատի առնելով, որ է-ով գրվող բառերը թեք հոլովաձևերում հնչյունափոխվում են, իսկ է-ով գրվողները՝ ոչ։ «Յայտ է, զի ուղղականն էովն է, զի յորժամ հոլովի՝ ին փոխի։ Զի թէ ել էր, որպէս թեւ, նետ, գետ, ի հոլովն նոյնպէս ելն մնայր, որպէս՝ թեւով, նետով, գետով, իսկ գէտն՝ գիտուն հոլովի և կէտն՝ կիտիւ»⁵¹։

Առողանութեանը և կետադրութեանը Տաթևացին մեծ դեր է տալիս։ Առողանութիւնը նա համարում է «արուեստ և զարդ բանից... տեսակարար և կերպարանաւոր»⁵², որն անհրաժեշտ է «գործաց, բնութեցողաց և իմացողաց»⁵³։ Այնուհետև խորհուրդ է տալիս, թե ինչպես կարողաւ աղոթքը, առակը, պատմությունը՝ ի նկատի առնելով բովանդակությունը։

Կետադրութեան մասին նախ նշում է, որ այն սովորաբար առողանութիւնից հետո ևն դասում, թեպետ իր կարծիքով, իր նշանակութեամբ այն ավելի առաջնային է։ «Կէտն թլպէտ յե-

44 Գիրք հարցմանց, էջ 230։

45 ՄՄ, ձեռ. № 1115, էջ 210բ։

46 Մեկնութիւն Մատթէի, էջ 40բ։

47 ՄՄ, ձեռ. № 1115, էջ 205բ։

48 Նույն տեղում, էջ 206բ։

49 Գիրք հարցմանց, էջ 177։

50 ՄՄ, ձեռ. № 1115, էջ 197բ։

51 Նույն տեղում, էջ 211բ։

52 Նույն տեղում, էջ 210ա։

53 Մեկնութիւն սաղմոսաց, էջ 5բ։

տոյ է կարգեալ դասիւ, ալլ առաջին է բան զայլ զառգանութիւնսն՝ պատուով⁵⁴։ Սկսեացու երկի մեկնության մեջ նախորդ բերականների նման տարբերում է երեք կետ՝ «ստորակէտ» միջին կէտ, ավարտեալ կէտս, իսկ «Մեկնութիւն սաղմոսաց, աշխատության մեջ ավելացնում

է վերնակար, խոսում նաև աստղանշան

✕

հոբելյան

1, լի-

մինիսկոս

✓

և հիպոթիմիսկոս

✓

նշանների մասին:

Տաթևացին իր ժամանակին հարալեզվական շարժանշանների վերաբերյալ նույնպես արձևավոր դիտողություններ է արել՝ նա տարբերում է գլխի և դեմքի մի շարք շարժումներ. «Կ: շարժումն գլխոյ 2-ադք է՝ նախ՝ հաւանական 2-րդ՝ հրաժարական 3-րդ՝ սպառնական 4-րդ՝ հեզնական 5-րդ՝ տրտմական 6-րդ՝ զարհուրական», որոնցից հավանականը և հրաժարականը համարում է մտքի բուն թարգման. «Առաջին երկուքն որ հաւանականն և հրաժարականն՝ յայտնապէս զկիրս մտացն թարգմանեն. հաւանի բանին կամ ոչ հաւանիլ», սինդեզմաքի շարժումներն ըստ նրա օգնում են խոսքին. «Շարժումն ձեռաց լեզուի է օգնական և թարգման⁵⁵»:

Խոսքի մասերը դասակարգելիս Տաթևացին, հետևելով Հովնանես Որոտնեցուն⁵⁶, զուգորդել է փիլիսոփայական-տրամաբանական և բերականական սկզբունքները. «Իմաստասէրքն երկու ասնն զմաստնս բանի, այսինքն անուն և բայ, որ նշանակէ զէութիւն և զգործ: Իսկ շերականն ութ ասէ, այսինքն՝ անուն, բայ, ընդունելութիւն, յաւոյ, զերանուն, նախդիր, մակբայ, շաղկապ»⁵⁷։ Ինչպես հայտնի է, այսպիսի զուգորդում կատարել է նաև Դավիթը, սակայն եթե նա փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքը առաջագրելիս հինգ խոսքի մաս է առանձնացնում, ապա Որոտնեցին և Տաթևացին նշում են երկուսը: Ակնհայտ է, որ վերջիններս առաջին սկզբունքի դեպքում հետևեցին Արիստոտելին, սակայն, հայտնի է նաև, որ նույն փիլիսոփայական առանձնացրել է ոչ թե երկու, այլ երեք խոսքի մաս. անուն, բայ և շաղկապ (ընդ որում սա շատ ընդհանրական բնույթ է կրել), հետևաբար, կրճատելով նաև երրորդը և խոսքի մասերի բանակը հասցնելով նվազագույնի, Տաթևացին Որոտնեցու նման փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքի դեպքում բացարձակապես մի կողմ է թողնում լեզվականը և ամենաընդհանուր իմաստներն է նշում. զէութիւն և զգործ:

Խոսելով Դավիթի անցկացրած բաժանման մասին, ակտդ. Զահուկյանը հետևյալ դիտողություն է անում. «Բանի որ Դավիթը «փիլիսոփաների կարծիքը դնում է Դիոնիսիոսի բաժանման կողքին», ուստի «այս դեպքում բնական է սպասել, որ նա բերականության նկատմամբ հավասարապես կիրառելի համարի տրամաբանության և փիլիսոփայության տվյալները»⁵⁸։ Նույնը տեսնում ենք նաև Տաթևացու մոտ. ըստ նրա «բանը» հավասարապես է նախադասություն է, և՛ դատողություն, անունն ու բայը՝ նախադասության և դատողության անգամներ⁵⁹։

Տաթևացին «յո՛ւր նստի անուանց հոլովն և բայից» հարցին պատասխանում է, որ անունները հոլովվում են կամ նախդիրներով, կամ էլ՝ վերջավորություններով⁶⁰ և ընայած տարբերակման սկզբունքով այս դեպքում հետևում է Գրիգոր Մագիստրոսին, սակայն հրաժարվում է վերջինիս բերած երկակի հոլովման և իզական սեռի օրինակներից, որ Մագիստրոսը կազմել էր նույնարեւի համարանությամբ:

Շարունակելով առաջնորդվել փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքով, Տաթևացին հակադրում է ուղղականը և մյուս հոլովները, իբրև ուղիղ և թեք, ընդ որում ոչ միայն գոյականի, այլև դերանվան հոլովման դեպքում թեք հոլովածները միավորելով հոլովական անվան տակ:

54 ՄՄ, ձեռ. № 1115, էջ 210բ:

55 Գրիգ. քարոզութեան, Ձմեռան, էջ 273:

56 Որոտնեցու դասակարգման մասին տե՛ս Գ. Գրիգորյան. Հովնան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը. Երևան, 1950, էջ 196:

57 ՄՄ, ձեռ. № 1115, էջ 203ա:

58 Գ. Զահուկյան. Նշվ. աշխ. էջ 133:

59 Նույն տեղում, էջ 293:

60 Նույն տեղում:

Այսպիսով, նա միավորում է անունը, դերանունը և բայը իբրև փոփոխվող խոսքի մասեր։ Ենթադրվում է, որ հիմնականում առաջնորդվում է խոսքի մասերի բաժանման փիլիսոփայական-տրամաբանական սկզբունքով, ուստի և սպասելի էր, որ նա առանձնապես կանգ չի առնում առանձին հոլովների քննության վրա։ Ընդհանրացնում է հալոյի մաստերը հետևյալ կերպ. ուղղականը նշանակում է զգեստի, սեռականը՝ սեռական, գործիականը՝ զգեստական նշանակությունը⁶¹։

Տաթևացի անունների առաջացման երեք ուղի է նշում. հարանունարար, սերման հանապարհով և գոյացական ընդհանուր միություն է կալման էլ յարանունարար, որպես ի հերակցի հերակցի, յիսրայելի իսրայելի, Այսպես ի Քրիստոսի թրիստոսի, զի ի նման է յառաջ եկեալք ենա։ Երկրորդը շնայած նման է առաջինին առաջացման ձևով, սակայն մի շարք հատկանշներով տարբերվում է. սերկրորդ սեռը ասին և սերման սկիզբն, որպես հայրն և հայրենիքն, ինչպես այլ է, քան զառաջինն։ Զի այն է միություն առ բազում էր կալումն և այս ի բազմաց ի միին, որպես հայրն և հայն, զհղն և զառաջն և հայրն և մայրն, այսինքն թեև առաջին դեպքում ընդհանրացվում է, երկրորդ դեպքում ընդհանուրից ընտրվում է ամենահատկանշականը, ընդ որում Տաթևացու կարծիքով առաջացման ժամանակով երկրորդ տեսակը նախորդում է առաջինին. «Սել գիտելի է, զի այս (երկրորդ դեպքը—Ս. Գ.) նախ է ժամանակաւ, քան զառաջին սեռն զման երկուց. մին, զի նախ ծնանին և ապա անուանին հեղակեանք կամ այլոր...»։ Եվ երրորդը ամենաընդհանրական տեսակն է. «Իսկ երրորդ սեռ է գոյացականն, որ ստորագի տեսակաց որպէս կենդանին»⁶²։

Քերականական որոշ հարցադրումների նկատմամբ Տաթևացի հանդես է բերել կանխակալ մոտեցում։ Ընդհանրապես հանդես գալով գրոց լեզուն անփոփոխ թողնելու տեսակետի պաշտպանության, նա իր ավանդապաշտության նպատակ է հետապնդել անխոցելի պահել հայերենի ինքնուրույնությունը, թերևս սրանով պետք է բացատրել նաև նրա մեթոդական վերաբերմունքը «կուռ» եղանակի կիրառման նկատմամբ։ Այն դեպքում, երբ Հոլմանենս Երզնկացին «կուռ»-ով ձևերը գրանցում է իբրև ընդունելություն գտած և նորմավորված, Տաթևացու հսկայածավալ դրական ժառանգության մեջ մենք «կուռ» եղանակի այնքան սակավաթիվ գործածություն ենք գտնում⁶³, որ հակված ենք նույնիսկ կարծելու, որ հեղինակային օրինակներում դրանք պետք է որ եղած լինեն։ Հետաքրքիր է, որ նա «կուռ» եղանակի գործածության համար մեղադրում է միարարներին (ազգն ֆռանկաց), որոնք մկրտության ժամանակ ոչ թե ասում են «մկրտի ի ձեռն իմ», այլ՝ «կուռ մկրտեմ»։ Իսկ ինչպե՞ս է փաստարկում Տաթևացին.

ա. «կուռ»-ն դիտում է իբրև ուղիղ խնդիր, այսինքն ըստ նրա «կուռ մկրտեմ» նույնն է, թե «մկրտեմ զկուն»՝ «զոր և անյարմար շարաբանութեամբ զկուն ցուցանեն մկրտել և ոչ նուրբեալն»։

բ. Երկրորդ դեպքում շեշտում է «կուռ»-ի հարկադրական երանդը, այսինքն նրա օրերում արդեն միտում է եղել «կուռ»-ի գործառության սահմանափակման. «անպատշաճութիւն է զի ասելն թէ՛ ես կուռ մկրտեմ, երևի թէ նուրբեալն ոչ իւր կամաւն է եկեալ ի մկրտութիւն, այլ բոնութեամբ և ի հարկէ կուռ մկրտեմ»⁶⁴։

Քանի որ Տաթևացին նույնացնում է դատողությունը և նախադասությունը, ուստի անվան և սահմանման բնորոշման մեջ կարելի է տեսնել անվան և նախադասության կապը՝ վերջինս դիտելով իբրև անվան ծավալում. «Անուն է սահման համառօտ և սահման է անուն ծառայելու, քանզի միապէս յայտնեն զքնութիւն մարդոյ անունն և սահմանն։ Զի թէ ասել որ՝ կենդանի, բանական, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ. այս բնութիւն մարդոյ յայտնէ ե թէ ասել կարձ և համառօտ թէ՛ մարդ է. և այս զքնութիւն մարդոյ յայտնէ»⁶⁵։

Նախադասությունը և դատողությունը դիտում է իբրև անվան և բայի կապակցություն. «Ազնեա։ Բայ լ. երբ տէր սուսն զամ աստուած՝ լինի բան, զի յանուանէ և ի բայէ բանն էաւորի»⁶⁶։

⁶¹ ՄՄ, ձեռ. № 1115, էջ 203ր։

⁶² Գրիգոր Տաթևացի. Համառօտ տեսութիւն ի գիրս Պրփիրի. Մաղրաս, 1793, էջ 336—337։

⁶³ Օրինակ, «Մեկնութիւն Մատթէի» երկում, որ կազմված է շուրջ 630 էջից, հանդիպել ենք «կուռ» եղանակի 2—3 գործածության։

⁶⁴ Գիրք Հարցմանց, էջ 585։

⁶⁵ Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 555, Տե՛ս նաև՝ Գրիգոր Տաթևացի. Գիրք Պարապմանց Կիրովի. Կ. Պոլիս, 1717, էջ 530։

⁶⁶ ՄՄ, ձեռ. № 1115, էջ 198ր։

Նա դիմում է նաև «ենթակայ» և «ստորագեցած» տերմիններին՝ քննելով միջնադարյան քերականներին այնքան հուզող ենթակայի և ստորոգյալի առաջնության հարցը։ Նրա կարծիքով, այնուամենայնիվ, ստորոգյալը «առաւել» է, քան ենթական։ Դա ակնհայտ է «գի՛նչ է ենթակայ և ստորոգեալն» հարցի պատասխանից։ «Ենթակայ ի ներքոյ եղեալն է և ստորոգեալն, որ ի վերայ գայ. է ենթակայ, նախ զի ի ներքոյ է՝ 2-րդ՝ առաջին։ 3-րդ՝ գոյ, նուազ ընդդէմ այսմ ստորոգեալն, նախ զի ի վերայ է՝ 2-րդ՝ յետոյ, 3-րդ՝ դոյ և պատահումն։ 4-րդ՝ առաւել»⁶⁷։ Այս բնորոշումից կարելի է անել նաև հետևյալ եզրակացությունները.

1 ենթական շարահասութիւնով նախորդում է ստորոգյալին,

2 ենթական արտահայտում է գոյը (մասնորոշում),

3 ստորոգյալը արտահայտում է գոյը և պատահումը (մատերիան և շարժումը)։

Ի՞նչ աղբյուրներ և տարբերություններ է ի հայտ բերում Տաթևացին այս հարցադրումներով նախորդ քերականների հայացքների հետ։

Ենթակայի նախադաս լինելը ստորոգյալի նկատմամբ ընդունել են գրեթե բոլոր հայ միջնադարյան քերականները։ Նրանց մեծամասնությունը ընդունել է նաև անվան առավելությունը բայի նկատմամբ։ Այս կարծիքի հիմքում ընկած է եղել գոյի և պատահման հարաբերակցության հարցը. նրանք, ովքեր ընդունել են, որ իր առաջացմամբ գոյը նախորդել է պատահմանը, ընդունել են նաև անվան առաջնությունը բայի նկատմամբ։ Այսպես, օրինակ, ըստ Դավթի՝ «նախ յառաջանալ ի զից ի գոյոյն քան պատահման յայտ է՝ անուան քան բաւի»⁶⁸։ Այդ կարծիքին են նաև Մովսէսը, Սրկեղացին, Տաթևացին, ի տարբերություն այս քերականների, զրտնում է, որ բայը (ստորոգյալը) միաժամանակ գոյի և պատահման արտահայտություն է, ուստի ընդունում է, որ այն առավելություն ունի միայն գոյը արտահայտող անվան (ենթակայի) նկատմամբ։ Նշենք, որ գոյի և պատահման նման բնորոշում հանդիպում ենք նախորդներից Վարդան Արեւելցու մոտ։ «Իսկ բանին առաջին մասն անունն է և զգոյութեան սահման ունի անունն... յետ անուան բայ է, որ զանունն և զգոյութն ցուցանէ»⁶⁹։ Ստորոգյալի առավելությունը ենթակայի նկատմամբ ընդունել է նաև Բարթուղիմէոս Մարաղացին իր «Համառոտ հաւարան»-ի յո՛ւժ օգտակար ի դիւլթիկային» աշխատության մեջ («ստորագեցալն է պատուականագոյն մասն նախադասութեան»⁷⁰), որը 1363 թ. Տաթևացին ընդօրինակել է Հովհաննէս Որոտնեցու պատվերով և չի բացառվում, որ Մարաղացու կարծիքը դեռ է խաղացել։

Գիտական արժեք են ներկայացնում նաև Տաթևացու բառամեկնությունները և ստուգաբանությունների մի մասը, որոնք, ինչպես ասացինք, ընդգրկված չեն «Հայկական բառարանում», իսկ Հր. Աճառյանի «Հայերեն արձատական բառարանում» վկայակոչված են մասամբ միայն։

Տաթևացին բասերի մեկնությունը և ստուգաբանությունը անհրաժեշտ է համարել, որովհետև նրա կարծիքով բառերն ունեն ներքին իմաստներ, որոնք հաճախ խաթարվում են տգետ ընթերցողների, գրիչների կողմից. «Եւմարտից իմաստն ի ներքոյ բառիցն և գրոցն է ծածկեալ։ Ըստքայ յայլի ի տգէտ զրչաց և ի գնչու և ի տգէտ ընթերցողաց. յայտ է թէ և բանն յայլի նոցանէ»⁷¹), այսինքն բառի աղավաղումն, ըստ Տաթևացու, տանում է նաև մտքի աղավաղման, հետևաբար, բառի բացատրությունը և ստուգաբանությունը ստանում են կրկնակի արժեք։

Տաթևացին տարբերում է բառի ստուգաբանությունը և մեկնությունը. առաջին դեպքում, եթե նա գործ ունի փոխառյալ բառի հետ, ապա բառը ստուգաբանում է այն լեզվի տվյալներով, որից այն փոխ է առնված, իսկ բացատրության դեպքում տալիս է հիմնական իմաստը կամ իմաստները։ Նրա կատարած ստուգաբանությունների մեջ ըստ իմաստային դաշտերի կարելի է առանձնացնել հատուկ անունների, աշխարհագրական անունների, կրոնական ծեսերի, ամսանունների խմբերը։ Ստուգաբանվող բառերը հստակորեն կարելի է բաժանել նաև երկու խմբի՝ ըստ ստուգաբանության եղանակի.

ա. այսպես կոչված «ծողովրդական» ստուգաբանությունն (սա գերակշռող մաս է կազմում նրա ստուգաբանությունների մեջ)։

բ. նիշտ ստուգաբանություն (հիմնականում ընդգրկում է փոխառյալ բառերը)։

Չնայած «ծողովրդական» ստուգաբանությունը ինքնին ղեկը է գիտականությունից, սակայն սխալ կլինի Տաթևացու այդ եղանակով կատարած ստուգաբանությունները համարել բոլորովին

⁶⁷ Համառոտ տևութիւն ի գիրս Պրփրիի, էջ 353։

⁶⁸ Գ. Զատուկյան. նշվ. աշխ. էջ 139։

⁶⁹ Նույն տեղում, էջ 253։

⁷⁰ Յո՛ւժ հաննէս Բոնեցի. Յաղագս քերականին. Երևան, 1977, էջ 121։

⁷¹ ՄՄ, ձև. խ. 2115, էջ 196բ։

անարժեք, որովհետև դրանք երբեմն ունեն սոցիալական հնչողություն, երբեմն՝ պատմական արժեք և վերջապես ամենատարբեր տեղեկություններ են հաղորդում ժամանակի բարբերի, իրականության, բնության երևույթների և նույնիսկ այլ ժողովուրդների վերաբերյալ. այսպես օրինակ՝ ազգային՝ ասորացի և ողորմելիք, որը հասարակ անուամբ աչքատը կոչին, այսինքն ի յառ-խեաց ե ի յընչից հատեալ. զի աղին՝ ինչքն և ստացուածք են մարդոյն ե կամ աղքատ, ա-սինքն յաղեաց և ի գթոց հատեալ, զի սորա մարդկան ատելիք են եղեալ⁷², վարդավառ՝ Ե-թանոսը զայս տօնէին յանուն Ափրոդիտեայ կոոցն և զվարդն նմա մատուցանէին և յանուն նորա ծաղկօք տօնէին: Այլ տէրն մեր զսնտոյ յոյսն նոցա խափանեաց և յինքն զարձոյցն⁷³, Յուդաեան—Եանուն բաղադրեալ է, զի ի ստորոտէ Լիրանան լեռնէ երկու աղբիւր ելանէ. մինն կոչի Ար և միւսն՝ Դան և ի մի խառնեալ լինի Յորդանան⁷⁴:

Պատմական տեղեկություն է պարունակում Եզոզ և մազօզ, անվան ստուգաբանություն, խոսքը սկյութներին այլ ժողովուրդների կողմից տրված անվանման մասին է. նրանց անվանել են սկյութացի, սարմատ, ալան, ռոկսոլան, իսկ ըստ Տաթևացու՝ նաև նիկի: Այդպես պետք է նրանց անվանած լինեն հույները, որովհետև Տաթևացին բերում է նաև հայերեն համարժեքը՝ Մյաղթօղթ (իսկ հունարեն այդ բառը հենց նշանակում է հաղթանակ, որտեղից և հունական դիցաբանության մեջ հաղթանակի աստվածուհու՝ Նիկի անվանումը). Եզոզ և մազօզ՝ զսկի-թոցուց ազգն ասեն հիւսիսոյ. որոյ անունն կոչի Նիկի, այսինքն՝ յաղթօղթ. Եւ ոմանք ասեն թէ՛ Եզօզ և մազօզ ի յերբայեցուց լեզուն ժողով հեթանոսաց ասի⁷⁵:

Տաթևացին միանգամայն ձիշտ է ստուգաբանում բազմաթիվ փոխառյալ հատուկ անուն-ներ, եկեղեցի, սաղմոսարան, կաթողիկէ, կիրակէ, արեղայ, նավասարդ և բազմաթիվ այլ բառեր. Եկեղեցի՝ Եհմանուն է և Գ նշանակութիւն ունի. զի կոչի եկեղեցի շինեալն ի քարանց և յայլ նիւթոց իրր ժողովարան: Եւ եկեղեցի կոչին հաւատացեալ ժողովուրդքն ի սմա...: Եկեղեցի կոչի սրբոցն ժողովքն⁷⁶. Եկաթողիկէն ընդհանրական ասի⁷⁷: Ընդհանուր ասի կաթողիկոսն և տեսալ՝ եպիսկոպոսն⁷⁸. Եկիրակէ որ է տէրունական⁷⁹:

Տաթևացու ստուգաբանած բառերի թիվն անցնում է 150-ից. որոնց մեջ ձիշտ ստուգաբան-վածները կազմում են հինգերորդ մասը. Եվ քանի որ ստուգաբանությունն իրր գիտություն իր խոսքն ասելու էր միայն XIX դարում, հետևաբար, այդ ցուցանիշը միջնադարյան հայ քե-րականի համար փոքր թիվ չէ: Առաջին հերթին պետք է ընդգծել Տաթևացու միանգամայն լուրջ վերաբերմունքը ստուգաբանության նկատմամբ:

Կալով Տաթևացու բառամեկնություններին, պետք է ասել, որ դրանք հիմնականում համ-ընկնում են գրաբարյան բառազանձը ներկայացնող բառարանների բացատրությունների նե-տու: Մյուս կողմից՝ դրանք արժեքավոր են նաև իրր ժամանակակից վկայություն բառի տվյալ նշանակության վերաբերյալ: Բառի պատմությունն ուսումնասիրելիս կարևոր է իմանալ, թե ինչպես է այն ընկալվել տարբեր ժամանակաշրջաններում, իսկ այս առումով, ժամանակակից վկայությունը ունի եզակի նշանակություն: Օրինակ, արդի հայերենում պանդուխտ-եղբն, խեթ-ոս-քեն, հիվանդություն-տկարություն-ցավ, կոիվ-մարտ-պատերազմ շարքերն ընկալվում են իրր հոմանիշներ, մինչդեռ Տաթևացին ներկայացնում է դրանք տարբերակված իմաստներով: Բերենք միայն մի շարքը⁸⁰. Եհիւանդութիւն է պակասութիւն առողջութեան. տկարութիւն ուկա-սութիւն զօրութեան. ցաւ—[է] ի դժայական ջիւրն⁸¹:

Վկայակոչելով նրան, կարելի է ասել, որ այդ բառերի իմաստային տարբերակվածությունը ընկալվել է մինչև XV դարի սկիզբը, այլապես դրանց տարբերության բացատրության կարիքը չէր զգացվի:

Տաթևացու բառագործածությունները ևս օգնում են ընկալելու բառերի նախնական տա-րբերակվածությունը, նշանակությունը և նույնիսկ՝ հաստատելու այս կամ այն ենթադրությունը:

72 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 369:

73 Նույն տեղում, էջ 498:

74 Գիրք քարոզութեան, Ձմերան, էջ 60:

75 Գիրք որ կոչի Ոսկեփորիկ, էջ 332:

76 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 396, 705:

77 Գիրք հարցմանց, էջ 532:

78 Գիրք քարոզութեան, Ամարան, էջ 52:

79 Մեկնութիւն Մատթէի, էջ 330:

80 Նույն տեղում, էջ 105:

Այսպես, օրինակ, չովան Ոսկերեքանի «Եւ իրեն զհայազնդիրոսն որ աղբով պարարին»⁸¹ նախագասութիւնը նա փոխարինում է «որպէս կռափնտեռն, որ գալաւ աղբով պարարի»⁸² նախագասութիւնը, որտեղ մեզ հետաքրքրում է կռափնտեռն ձեռն: ՆշՔ-ն երկուսն էլ բացատրում է «րնդեռն աղբալուղ, բզէղ»՝ վկայակոչելով սխալ Ոսկերեքանի կիրառութիւնը: Ահապէս ընդգծում է ղեղին ձեռն սխալ լինելը: Տաթևացուն չի վկայակոչում: Մինչդեռ, ինչպես տեսանք, Տաթևացիի բառատեղակ է բառի Հիշտ գործածութիւնը:

Ակերնասյան տարբերակված են եղել հայել և նայել բառերը, որը հաստատում է նաև Տաթևացին: Նրա կողմից այդ տարբերակումը նշանակում է նաև է. Առասանք. «Հայել և նայել բառերի իմաստային այս տարբերութիւնը զիտակցել է նաև Տաթևացին, որ Գիրք Բարցմանց» էջ 407-ում բացատրում է՝ «Հայել «ցածրից ղերն նայել», նայել՝ «վերից ներքն նայել»⁸³: Ն. Աղոնցն իր «Հայաստանը Հուսիսիանոսի զարաշրջանում» աշխատութեան մեջ քննելով աստուանան շարարեթիւնները Հայաստանում, գրում է. «Հնարավոր է, որ օժիտ բառը հայերենում ևս գործ է ածվել այն նվերի իմաստով, որ փեսացուն տալիս է հարսնացունին»⁸⁴: Մի կողմ թողնելով այն հարցը, որ անվանի հայագետը այդ բառը դնում է «հայոց լեզվի ոչ արիական ասորերի թվին»⁸⁵, նրա վերոհիշյալ կարծիքը հաստատվում է Տաթևացու տվյալներով: Նա տարբերակում է բառից և օժիտը, առաջինը տրվել է հարսին «որ կոռնեց, երկրորդը՝ փեսային»⁸⁶:

Ասենք նաև, որ սկզբունքորեն իր աշխատութիւնները շարադրելով հին հայերենով, Տաթևացին հոգ է տարել, որ դրանք լինեն սաալելի և պարզ՝ խոստովելով սակայն բարբառային և խոսակցական տարրերի գործածութիւնից («Եւ գեղջուկ իմն աշխարհանան խօսից յարմարեայ»)՝⁸⁷ չխոսափելով սակայն ժողովրդական մտածողութեանը հատուկ բաղձադան միջոցներից: Վերջինիս հատուկ խոր ընդհանրացումներ են նրա բաղձաբան աստվծները, թեմական խոսքերը: «Յիմար լեր ի շարին և իմաստուն ի բարին»⁸⁸, «Զի որ ամառն շրջէ ի կոնէ ի կուն, ի ձմեռն շրջի ի ղոնէ ի ղուն»⁸⁹, «Ամենայն պարզ թաղսան սարմնուն, չէ օգուտ ննջեցելոյն»⁹⁰ և այլն:

Այս ամենն, անուշտ, հարստացնում է հայոց լեզվի այդ շրջանի տառամութիւնը: Ինքն իրաւում այն ասին, որ նրա բառամեկնութիւնների զիտականութիւնը լրիւով իրավունք է տալիս դրանք համարելու պատմական բառարանագրութեան հուսալի աղբյուր, իսկ նրա տեսական հարցադրումները կարող են նշանակութիւն ունենալ բառարանալուր բերականական հարցի տառամութիւնը ամբողջականելիս:

ГРИГОР ТАТЕВАЦИ И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЯЗЫКОЗНАНИЯ

С. М. ГРИГОРЯН

Резюме

Григор Татеваци (1346—1410) — выдающийся научный и общественный деятель средневековья, философ и педагог.

В 1390—1402 гг. он был ректором Татевского университета, преподавал «искусство письма», музыку, философию, богословие. В своих многочисленных работах он обращался к проблемам языкознания, занимался толкованием слов и этимологией. Толкования слов Татеваци ценны как источник исторической лексикографии.

⁸¹ Յովաննու Ոսկերեքանի Յաւետարանդիրն Մատթէոսը. Վենետիկ, 1826, էջ 597:

⁸² Մեկնութիւն Մատթէի, էջ 178ր:

⁸³ է. Աղոնց. Իստարեքանական և ասորականական հետազոտութիւններ. Երևան, 1964, էջ 93:

⁸⁴ Ն. Աղոնց. Հայաստանը Հուսիսիանոսի զարաշրջանում. Երևան, 1987, էջ 217-ի տողաւակ:

⁸⁵ Նույն տեղում, էջ 216:

⁸⁶ Գիրք Բարդղութեան, Ամարան, էջ 198:

⁸⁷ Գիրք Բարցմանց, էջ 772:

⁸⁸ Գիրք Բարդղութեան, Ամարան, էջ 54:

⁸⁹ Նույն տեղում, էջ 118:

⁹⁰ Նույն տեղում, էջ 148: